



Լ. Ն. ՅՈՒՍՅՈՒՅ

ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ
ԱՍՏՈՒԱԾ ՄԵԿ Է

№ 1

ԳԻՆՆԷ Ե ԿՈՊ.

891.71
S-80

19 NOV 2010

31.71

7-80

47

Լ. Ն. ՏՕԼՍՕՅ

ԱՄԵՆՔԻ ՀԱՄԱՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԷԿ Է

ԲԵՐՆԱՐԴԷՆ ԴԷՍԵՆՊԻԵՐԻ ՆՄԱՆՈՂՈՒԹԵԱՄԲ

Թարգմ. Լ. ԴԱՆԻԷԼԵԱՆՑԻ

№ 1



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «Ը Պ Օ Խ Ա» Գանձակալա Յ.

1911



13760-57

ԱՄԵՆԲԻ ՀԱՄԱՐ ԱՍՏՈՒԱԾ ՄԵԿ Է

Հնդկական Սուրաթ քաղաքում մի սրճարան վար: Այնտեղ պատահում էին իրար՝ զանազան երկիրներից եկող անցորդներն ու օտարերկրացիները և յաճախ զրոյց անում:

Մի անգամ այնտեղ մտաւ պարսից գիտնական մի աստուածաբան: Նա իր ամբողջ կեանքում ուսումնասիրում էր Աստուծոյ էութիւնը և կարգում ու գրում էր այդ մասին գրքեր: Երկար ժամանակ նա այդպէս այնքան մտածում էր, կարգում ու գրում Աստուծոյ մասին, որ քիչ էր մնում խելացնորութեան հասնէր. ամեն ինչ շրփոթուեց նրա գլխում, ու նա այն դրութեան հասաւ, որ այլ ևս չէր հաւատում Աստուծուն:

Թագաւորը իմացաւ այդ մասին և արտաքսեց նրան պարսից թագաւորութեան սահմաններէց:

Ահա այդպէս իր ամբողջ կեանքում խորհելով սկզբնապատճառի մասին, մոլորուեց դժբախտ աստուածաբանը և, փոխանակ հասկանալու՝ թէ ինքը արդէն կորցրել է իր բանականութիւնը, ըսկսեց մտածել, որ այլ ևս գոյութիւն չունի տիեզերքը կառավարող նախախնամութիւնը:

Այդ աստուածաբանը մի աֆրիկացի ստրուկուն էր, որը ամենուրեք ուղեկցում էր նրան: Երբ աստուածաբանը մտաւ սրճարանը, աֆրիկացին

մնաց բակում դրան մօտ ու նստեց քարի վրայ արևի այրող ճառագայթների տակ: Նա նստել ու քշում էր իրանից ճանճերը: Իսկ աստուածաբանը պառկեց սրճարանում գահաւորակի վրայ ու հրամայեց մի բաժակ աֆիօն տալ իրան: Երբ նա խմեց բաժակը, և աֆիօնը սկսեց խառնել նրա ուղեղը, նա դիմեց իր ստրկին:

— Հը՛, անարգ ստրուկ, — ասաց աստուածաբանը, — ասա ինձ, ի՞նչպէս ես կարծում. Աստուած կայ թէ՛ չկայ:

— Հասկանալի է, որ կայ, — պատասխանեց ստրուկը և իսկոյն էլ դուրս հանեց գօտկի տակից փայտից շինած փոքրիկ մի կուռք: — Ահա ասիկ, — ասաց ստրուկը, — ահա այն աստուածը, որ ինձ պահպանում է այն օրից սկսած, երբ ես ապրում եմ աշխարհումս: Այդ աստուածը պատրաստուած է այն միւսնոյն սրբազան ծառի ճիւղից, որին երկրպագում են ամենքը մեր երկրում:

Աստուածաբանի ու իր ստրկի միջև տեղի ունեցած այդ խօսակցութիւնը լսեցին սրճարանում եղողները և զարմացան:

Նրանց տարօրինակ թուաց տիրոջ տուած հարցը, բայց աւելի ևս տարօրինակ՝ ստրկի պատասխանը:

Մի բրահմին, որը լսել էր ստրկի խօսքերը, դիմեց նրան ու ասաց.

— Անմիտ թշուառական. կարելի է միթէ մըտածել, որ Աստուած գտնուելիս լինի մարդու գօտկի տակ: Աստուած մէկ է. դա Բրաման է. և այդ Բրաման տիեզերքիցն էլ մեծ է, որովհետև Նա է ստեղծել ամբողջ տիեզերքը: Բրաման մի-

ակ, մեծ Աստուածն է, այն Աստուածը, ի պատիւ որի կառուցուած են տաճարներ. Գանգես գետի ափերին. այն Աստուածը, որին սպասուորում են նրա միակ քուրմերը՝ բրահմինները: Միայն այդ քուրմերն են ճանաչում իսկական Աստուծուն: Քոան-հազար տարի է անցել արդէն, և որքան էլ յեղաշրջումներ պատահելու լինեն աշխարհումս, այդ քուրմերը կը մնան միևնոյնը, ինչպէս որ եղել են միշտ. որովհետև Բրամանը, որ միակ, իսկական Աստուածն է, հովանաւորում է նրանց:

Այդպէս ասաց բրամինը, մտածելով համոզել բոլորին, բայց այդտեղ ներկայ եղող հրէայ սեղանաւորը առարկեց նրան.

— Ո՛չ, — ասաց նա. — իսկական Աստուծոյ տաճարը Հնդկաստանում չէ...: Եւ Աստուած հովանաւորում է ոչ բրահմինների դասը: Իսկական Աստուածը ոչ թէ բրահմինների Աստուածն է, այլ Աբրահամի, Իսահակի և Յակոբի Աստուածը: Եւ հովանաւորում է իսկական Աստուածը միայն իր՝ Իսրայէլի ժողովրդին: Աստուած աշխարհիս ստեղծագործութիւնից սկսած, անդադար, սիրում էր և սիրում է միայն մեր ժողովրդին: Եւ եթէ այժմ մեր ազգը ցլը ու ցան է եղել երկրիս վերայ, դա լոկ փորձութիւն է, իսկ Աստուած, ինչպէս որ խոստացել էր, պիտի ժողովէ նորից իր ժողովուրդը Երուսաղէմ, որպէս զի, վերականգնելով հնութեան հրաշալիքը՝ Երուսաղէմի տաճարը, Իսրայէլը դարձնէ իշխող բոլոր ազգերի վրայ:

Այդպէս ասաց հրէան ու լաց եղաւ: Նա կամենում էր էլի շարունակել իր ճառը, բայց այդ-

տեղ ներկայ եղող իտալացին ընդհատեց նրան.

— Ճշմարիտ չէք ասում դուք, — ասաց իտալացին հրէային: — Դուք վերագրում էք Աստուծուն անարդարութիւն: Աստուած չէ կարող սիրել մի ժողովուրդ միւսներից ակելի: Ընդհակառակը, եթէ նա առաջներում նոյն իսկ հովանաւորում էլ էր Իսրայէլին, ահա արդէն 1800 տարի է անցել այն օրից, երբ Աստուած բարկացաւ նրա վրայ և իր բարկութեան իբրև նշան վերջ տուեց նրա գոյութեանը ու ցրեց այդ ժողովուրդն աշխարհիս բոլոր կողմերը, այնպէս որ այդ հաւատը ոչ միայն չէ տարածվում, այլ և տեղ-տեղ միայն հազիւ մնում է: Աստուած գերադասութիւն չէ տալիս և ոչ մի ազգի, այլ կոչ է անում բոլոր մարդկանց, որոնք կամենում են փրկութիւն ստանալ, մտնել հոօվմէական միասնական կաթօլիկ եկեղեցու ծոցը, որից դուրս փրկութիւն չկայ:

Այսպէս ասաց իտալացին: Բայց այդտեղ գտնուող բողոքական պատօրը, գունատուելով, պատասխանեց կաթօլիկական միսիօնէրին.

— Ինչպէս կարող էք դուք ասել, որ փրկութիւնը հնարաւոր է միայն ձեր դաւանութեան մէջ: Իմացէք ուրեմն, որ փրկութիւն կը ստանան նրանք միայն, որոնք, Աւետարանի համաձայն, կը ծառայեն Աստուծուն Յիսուսի սահմանած օրէնքի ոգով ու ճշմարտութեամբ:

Այն ժամանակ մի թիւրք, որը ծառայում էր Սուրբի մաքսատանը և այդ միջոցին նրանց մօտ նստած ծխում էր իր ծխամորճը, լուրջ դէմք ընդունելով դիմեց երկու քրիստոնեաներին:

— Ի դուր էք դուք այդպէս հաւատացած ձեր

հոօվմէական հաւատի մէջ, — ասաց նա: — Ձեր հաւատը արդէն սրանից վեց-հարիւր տարի առաջ փոխարինուած է Մուհամմէդի ճշմարիտ հաւատով: Եւ, ինչպէս դուք ինքներդ էլ տեսնում էք, Մուհամմէդի ճշմարիտ հաւատը հետզհետէ ակելի ու ակելի է տարածվում թէ՛ Եւրօպայում, թէ՛ Ասիայում և՛ նոյն իսկ լուսաւորուած Չինաստանում: Դուք ինքներդ էք խոստովանում, որ հրէաները Աստուծոյ աչքից ընկած են, և, իբրև ապացոյց դրան, առաջ էք բերում այն փաստը, որ հրէաները անարգուած են և նրանց հաւատը չէ տարածվում: Ընդունեցէք ուրեմն Մուհամմէդի կրօնի ճշմարիտ լինելը, որովհետև նա մեծարուած է և շարունակ տարածվում է: Փրկութիւն կը ստանան միայն նրանք, որոնք հաւատում են Աստուծոյ վերջին մարգարէին՝ Մուհամմէդին: Եւ այն էլ միայն Օմարին հետևողները, այլ ոչ Ալիին, որովհետև Ալիին հետևողները ուղղափառ չեն:

Այդ խօսքերը լսելով՝ պարսից աստուածաբանը, որ պատկանում էր Ալիի աղանդին, ուզում էր հակաճառել: Սակայն սրճարանում նոյն միջոցին մեծ վէճ ծագեց այդտեղ եղող զանազան հաւատների ու դաւանութիւնների պատկանող բոլոր օտարերկրացիների շրջանում: Այդտեղ կային հաբէշական քրիստոնեաներ, հնդկական լամաներ, իսմայիլացիներ ու կրակապաշտներ:

Ամենքն էլ վիճում էին Աստուծոյ էութեան մասին և այն բանի մասին, թէ ինչպէս պէտք է մեծարել Նրան: Ամեն մէկը նրանցից պնդում

էր, որ միայն իր երկրում են ճանաչում իսկական Աստուծուն և գիտեն՝ թէ ինչպէս պէտք է մեծարել նրան:

Ամենքն էլ վիճում էին, բղաւում: Միայն այդտեղ ներկայ եղող շինացին՝ Կօնֆուցիոսի աշակերտը հանգիստ նստել էր սրճարանի անկիւնում և չէր մասնակցում վիճարանութեանը: Նա թէյ էր խմում, ականջ դնում, թէ ինչ էին խօսում, բայց ինքը լուռ էր:

Թիւրքը, նկատելով նրան վիճարանութեան միջոցին, դիմեց նրան ու ասաց.

— Դու գոնէ պաշտպանիր ինձ, բարի չինացի: Լսում ես դու, մինչդեռ կարող էիր մի որևէ բան ասել իմ օգտին: Ես գիտեմ, որ ձեր հայրենիքում՝ Չինաստանում այժմ զանազան տեսակ կրօններ կան: Ձեր առևտրականները քանիցըս ասել են ինձ, որ շինացիները բոլոր ուրիշ կրօններից՝ մահմեդական կրօնը համարում են ամենալաւը և սիրով ընդունում են նրան: Արդ՝ պաշտպանիր իմ ասածները և յայտնիր, թէ ինչ ես մտածում դու ճշմարիտ Աստուծոյ ու Իր մարգարէի մասին:

— Այո, այո, ասա ինչ որ մտածում ես դու, — դիմեցին նրան միւսները նոյնպէս:

Չինացին՝ Կօնֆուցիոսի այդ աշակերտը, աչքերը փակեց, մտածեց մի քիչ և ասա, նորից բանալով՝ Թափ տուեց ձեռքերը իր զգեստի լայն թևքերից, ծալեց կրծքի վրայ ու խօսեց կամաց, հանգիստ ձայնով:

* *

Պարոններ, — ասաց — նա, ինձ թւում է, որ մարդկանց ինքնասիրութիւնը ամենից աւելի է խանգարում նրանց՝ համաձայնութեան գալու կրօնի խնդրում: Եթէ դուք նեղութիւն կրէք ականջ դնելու ինձ, ես կը բացատրեմ ասածներս օրինակով:

Չինաստանից ես Սուրաթ ուղևորուեցի անգլիական մի շոգենաւով: Ճանապարհին մենք մօտեցանք Սումաթրա կղզու արևելեան ափին՝ Չուր վերջնելու համար: Կէս օրին ցամաք իջանք ու նստեցինք ծովափին՝ կօկօսեան արմաւենիների ստուերում կղզու բնակիչների գիւղից ոչ հեռու:

Նստածներս մի քանի հոգի էինք զանազան երկիրներից:

Երբ մենք նստած էինք, մօտեցաւ մեզ մի կոյր մարդ:

Ինչպէս տեղեկացանք յետոյ, այդ մարդը կուրացել էր նրանից, որ չափից դուրս երկար ու յամառ կերպով նայում էր արեգակին, որովհետև ուզում էր հասկանալ, թէ ինչ բան է արեգակը: Նա այդ ուզում էր իմանալ, որպէս զի տիրանայ արեգակի լոյսին:

Չարչարվում էր նա երկար ժամանակ, գործ էր դնում բոլոր գիտութիւնները, ուզում էր զբաղել արեգակի մի քանի ճառագայթները, բռնել նրանց ու փակել շիշի մէջ:

Երկար նա չարչարուեց այդպէս, շարունակ նայելով արեգակին, բայց և այնպէս ոչինչ չկարողացաւ անել, ու, դրա փոխարէն, ընդհակառակը, եղաւ այն, որ արեգակին շատ նայելուց նրա աչքերը սկսեցին ցաւել, և նա կուրացաւ:

Այն ժամացակ նա ասաց ինքն իրան.

— Արեգակի լոյսը հեղուկ չէ, որովհետև եթէ նա հեղուկ լինէր, կարելի էր նրան մի տեղից միւս տեղը անել, և նա կօրօրուէր քամուց ջրի նման: Արեգակի լոյսը կրակ էլ չէ. որովհետև եթէ կրակ լինէր, կը հանգչէր ջրի մէջ: Լոյսը հոգի էլ չէ, որովհետև նա տեսանելի է. մարմին էլ չէ, որովհետև նրան անկարելի է տեղահան անել, շարժել: Եւ որովհետև արեգակի լոյսը հեղուկ չէ, կրակ չէ, հոգի չէ, ոչ էլ մարմին, ապա ուրեմն արեգակի լոյսը ոչնչութիւն է.

Այդպէս դատեց նա, և մի օր, շնորհիւ այն բանի՝ որ շարունակ նայում էր արեգակին և միշտ էլ նրա մասին մտածում, կորցրեց թէ տեսողութիւնը և թէ բանականութիւնը:

Եւ երբ բոլորովին կուրացաւ, այն ժամանակ արդէն կատարելապէս համոզվեց, որ արեգակը գոյութիւն չունի:

Այդ կոյրի հետ միասին մօտեցաւ նաև իր ստրուկը: Վերջինս նստեցրեց իր տիրոջը կօկօսեան արմաւենու ստուերում, վերցրեց գետնին ընկած կօկօսի ընկոյկը և սկսեց նրանից պատրաստել կանթեղ: Կօկօսի կեղևի նրբաթել մասերից նա պատրաստեց պատրոյգ, ընկոյղի իւրը ձմիկեց կճեպի մէջ և պատրոյգը ծծեցրեց, թրջեց նրանով:

Մինչ ստրուկը զբաղուած էր իր կանթեղը պատրաստելով, կոյրը, հառաչելով, ասաց նրան.

— Հը՞, ստրուկ, ի՞նչ կասես. ուղիղ չէ՞ ասում քեզ, թէ արեգակը գոյութիւն չունի: Տեսնում ես՝ ինչպէս խաւար է: Իսկ ասում են, որ

արեգակը...: Եւ վերջապէս ի՞նչ բան է ակարարեգակը:

— Չը գիտեմ ինչ բան է արեգակը, — ասաց ստրուկը. — Ես բան չունեմ նրա հետ: Բայց այ, լոյսը իմանում եմ: Ահա ես այժմ կը շինեմ կանթեղ՝ թէ ինձ համար լոյս կը լինի և թէ քեզ կարող եմ նրանով ծառայութիւն մատուցանել ու ամեն բան գտնել իմ խրճիթում:

Եւ ստրուկը ձեռքն առաւ իր կճեպը:

— Ահա, — ասում է նա, — իմ արեգակը:

Այդ միևնոյն տեղում նստած էր մի կաղ մարդ իր անթացուպով: Լսեց նա այդ խօսքերը ու ծիծաղեց:

— Դու, ինչպէս երևում է, հէնց ի ծնէ կոյր ես եղել, — ասաց նա կոյրին, — որ չը գիտես, թէ ինչ բան է արեգակը: Ես կասեմ քեզ, թէ ինչ բան է. արեգակը հրային գունդ է, այդ գունդը իւրաքանչիւր օր առաւօտեան դուրս է գալիս ծովի միջից և իւրաքանչիւր երեկոյ էլ նստում մեր կղզու սարերում. այդ մենք տեսնում ենք ամենքս և դու էլ կը տեսնէիր, եթէ որ աչքերդ կարողանային տեսնել:

Ձկնորսը, որ նոյնպէս նստած էր այդտեղ, լսեց այդ խօսքերն ու ասաց կաղին.

— Իսկոյն երևում է, որ դու քո կղզուց այն կողմ ոչ մի ուրիշ տեղ չես եղել: Եթէ դու կաղ չը լինէիր և ծովով ճանապարհորդէիր, ապա կիմանայիր, որ արեգակը մեր կղզու սարերում չէ: Նստում, այլ ինչպէս որ դուրս է գալիս ծովի միջից, այնպէս էլ երեկոյեան կրկին ծովի մէջն է իջնում: Ես ուղիղ եմ ասում, որովհետև իւրա-

բանչիւր օր այդ բանը ես տեսնում եմ իմ աչքերով:

Այդ խօսքերը լսեց հնդկացին:

— Զարմանում եմ, — ասաց նա, — ինչպէս կարող է խելօք մարդը այդպիսի յիմար բաներ ասել: Կարելի՞ բան է, միթէ, ոչ հրեղէն գունդը ջրի մէջն իջնի ու չհանգչի: Արեգակը ամենևին հրեղէն գունդ չէ. արեգակը Աստուածութիւն է, և այդ Աստուածութիւնը կոչվում է Դէվա: Այդ Աստուածութիւնը իր երկնային կառքի վրայ բազմած անցնում է երկնքի վրայով Սպէրուվեա ոսկէ լեռան շուրջը: Երբեմն պատահում է, որ Աագու և Կէտու կատաղի օձերը յարձակվում են Դէվայի վրայ և կլանում նրան: Ահա այն ժամանակ խաւարումն է լինում, սակայն մեր քուրմերը աղօթում են, որպէս զի Աստուածութիւնը ազատուի, և նա ազատվում է: Միայն ձեզ նման՝ իրանց կղզուց երբէք այն կողմը չգնացող տգէտ մարդիկը կարող են երևակայել, թէ արեգակը լուսաւորում է միայն իրանց կղզին:

Այն ժամանակ խօսեց այդտեղ ներկայ եղող եգիպտական նաւի տէրը:

— Ո՛չ, — ասաց նա, — այդ էլ ճշմարիտ չէ. արեգակը Աստուածութիւն չէ և չէ պատում միայն Հնդկաստանի ու նրա ոսկէ լեռան շուրջը: Ես շատ տեղեր եմ նաւով ման եկել. եղել եմ Սև ծովում, Արաբիայի ասիերում, Մադագասկարում և Ֆիլիպեան կղզիներում: Արեգակը լուսաւորում է բոլոր երկիրները, այլ ոչ թէ միայն Հնդկաստանը. նա մենակ մի սարի շուրջը չէ պտտում, այլ բարձրանում է Եապօնիայի ա-

փերից, և այդ պատճառով էլ այդ կղզիները կոչվում են Եապէն, այսինքն՝ նրանց լեզուով՝ արեգակի ծնունդ. և նա իջնում ու մայր է մըտնում հեռու, շատ հեռու արևմուտքում՝ Անգլիայի կղզիների ետևում: Ես այդ շատ լաւ գիտեմ. որովհետև ինքս էլ շատ անգամ եմ տեսել այդ ու լսել դրա մասին պապիցս: Իսկ իմ պապը նաև էլ է մինչև ծովի բոլոր ծայրերը:

Նա կամենում էր դարձեալ խօսել, բայց մեր նաւի անգլիացի նաւաստին ընդհատեց նրան:

— Զկայ մի ուրիշ երկիր, Անգլիայից բացի, — ասաց նա, — որտեղ աւելի լաւ իմանային, թէ ինչպէս է պտտում արեգակը: Մենք ամենքս էլ գիտենք Անգլիայում որ արեգակը ոչ մի տեղից չէ բարձրանում և ոչ մի տեղ էլ չէ իջնում, այլ նա անընդհատ պտտում է երկրի շուրջը: Մենք այդ լաւ գիտենք, որովհետև ինքներս անա հէնց քիչ առաջ պտտեցինք երկրի շուրջը և ոչ մի տեղ էլ չհանդիպեցինք արեգակին: Ամենուրեք նա նոյնն է, ինչ որ անա այստեղ. առաւօտը յայտնվում է, իսկ երեկոյեան անյայտանում:

Եւ անգլիացին վերցրեց ձեռնափայտը, շրջան գծեց աւազի վրայ ու սկսեց բացատրել, թէ ինչպէս է արեգակը պտտում երկնակամարի վրայ երկրագնդի շուրջը: Բայց նա չկարողացաւ լաւ բացատրել և, ցոյց տալով իր նաւաստին, ասաց.

— Նա, պէտք է ասած, ինձանից աւելի է գիտուն և աւելի լաւ կը բացատրէ ձեզ այդ բոլորը:

Նաւապետը խոհեմ մարդ էր և լուռ լսում էր այդ խօսակցութիւնը, մինչև որ իրան հարցրին: Եւ այժմ, երբ ամենքը դիմեցին նրան, նա սկսեց խօսել ու ասաց.

— Դուք բոլորդ էլ խաբոււմ էք իրար և ինքներդ էլ խաբւում էք: Արեգակը չէ պտտում երկրագնդի շուրջը, այլ երկրագունդն է պտտում արեգակի շուրջը, և դեռ ինքն էլ միաժամանակ պտտում՝ դարձնելով դէպի արեգակի կողմը 24 ժամուայ ընաացքում թէ Եապօնիան, թէ Ֆիլիպեան կղզիները, և թէ Սոււմաթրան, որի վրայ մենք այժմ նստած ենք. ապա Աֆրիկան էլ, Եւրօպան էլ, Ասիան էլ, և ուրիշ շատ ու շատ երկիրներ: Արեգակը միայն մի սարի համար չէ լուսաւորում, ոչ էլ մի կղզու, մի ծովի և նոյն իսկ ոչ էլ մի երկրի համար, այլ այն տեսակ շատ մոլորակների համար, ինչպիսին է երկիրը: Այդ բոլորը ձեզանից իւրաքանչիւրը կարող էր հասկանալ, եթէ նայէր դէպի վեր երկինքը, այլ ոչ իր ոտների տակը, և եթէ՝ չմտածէր, որ արեգակը լուսաւորում է միայն իրա համար կամ միայն իր հայրենիքի համար:

Այդպէս ասաց իմաստուն նաւապետը, որ շատ աշխարհներ էր ման եկել և շատ նայել դէպի վեր՝ երկինքը:

* * *

Այն, մարդկանց մոլորութիւններն ու անհամաձայնութիւնները կրօնի հարցում՝ առաջ է գալիս ինքնասիրութիւնից, — շարունակեց չինա-

ցին՝ Կօնֆուցիոսի աշակերտը: — Ինչ որ արեգակի մասին ասուեց, նոյնն էլ Աստուծոյ մասին է: Իւրաքանչիւր մարդ ուզում է ունենալ իր առանձին Աստուածը կամ, գոնէ, իր հայրենիքի Աստուածը: Ամեն մէկը ուզում է գետեղել իր տաճարի մէջ Նրան, Որին չէ կարող ընդգրկել ամբողջ տիեզերքը:

Եւ կարող է, միթէ, որևէ տաճար համեմատուել նրա հետ, որը Աստուած ինքն է կառուցել, որպէս զի նրանում բոլոր մարդկանց միացնէ մի դաւանութեան և մի հաւատի մէջ:

Մարդկային բոլոր տաճարները կառուցուած են այդ տաճարի՝ Աստուծոյ ստեղծած տիեզերքի ձևով: Բոլոր տաճարների մէջ կան աւագաններ, կան կամարներ, ջահեր, սրբապատկերներ, մակազրութիւններ, զրբեր, օրէնքներ, զոհեր, սեղաններ ու քուրմեր: Ո՞ր տաճարի մէջ կայ, արդեօք, այնպիսի մի աւագան՝ ինչպիսին է ուկրիանոսը, այնպիսի կամար՝ ինչպէս երկնակամարը, այնպիսի ջահեր՝ ինչպէս արեգակը, լուսինը և աստղերը, այնպիսի սրբապատկերներ՝ ինչպէս կենդանի, սիրող, իրար օգնող մարդիկ: Ու՞ր են Աստուծոյ բարերարութեան մակազրութիւնները, որոնք նոյնչափ հասկանալի են, սրբան և այն բարեգործութիւնները, որոնք ամենուրեք սփռուած են Աստոսծոյ ձեռքով մարդկանց երջանկութեան համար: Ո՞րտեղ կայ մի այնպիսի օրինագիրք, այնքան պարզ իւրաքանչիւրի համար, ինչպէս այն, որը զրուած է նրա սրտում: Ո՞ւր են այն զոհերը, անձնագոհութեան այն զոհերի նման, որը սիրող մարդիկ մատուցանում

են իրանց մերձաւորներին: Եւ ո՞ւր է՝ բարի մարդու սրտի նման այն սեղանը, որի վրայ ինքը Աստուած ընդունում է զո՞հը:

Որքան աւելի բարձր կըմբռնի մարդը Աստուծուն, այնքան լաւ կը ճանաչէ նա Նրան: Իսկ որքան ճանաչէ նա Աստուծուն, այնքան աւելի կը մօտենայ Նրան, այնքան աւելի կը նմանի Նրա բարերարութեանը, ողորմածութեանը և դէպի մարդիկ տածած սիրոյն:

Այդ պատճառով էլ՝ թող նա, ով տեսնում է արեգակի ամբողջ լոյսը, որով լցուած է տիեզերքը. թող նա չդատապարտէ և չարհամարհէ այն սնտախաշտ մարդուն, որը իր կուռքի մէջ տեսնում է միայն մի ճառագայթը այդ լոյսի, թող չարհամարհէ և այն անհաւատացեալին, որ կուրացել է և ամենսին չէ տեսնում այդ լոյսը:

* * *

Այդպէս ասաց չինացին՝ Կօնֆուցիօսի աշակերտը, և սրճարանի մէջ եղող բոլոր մարդիկ լռեցին ու այլ ևս չէին վիճում այն հարցի մասին, թէ ո՞ւմ կրօնն է ամենից լաւը:

Վ Ե Ր Զ



